

ՀԱԿՈԲ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԼԻՆՃՅԱՆ

ՄԱՐՏԻՆ ԼՈՒԹԵՐԻՆ ԿԱՆԽՈՂ ՄԻ ՔԱՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՇԱՆԱՎՈՐ ԲԱՐԵԿԱՐԳԻՉՆԵՐ

1054 թ. լատինական և հունական Եկեղեցիների միջև գոյություն ունեցող տարաձայնությունները ու վեճերը պատճառ դարձան այդ Եկեղեցիների պաշտոնական և վերջնական բաժանման, այսինքն՝ հարաբերությունների ամբողջական խզման: Երկուստեք կատարվեցին մեղադրանքներ, և նզովքներ արձակվեցին միմյանց դեմ: Այնուհետև լատինական կամ արևմտյան հերձվածը իրեն վերապահեց **«կաթոլիկ»** լինելու հանգամանքը, մի բան, որ իրականության բնավ չի համապատասխանում. սակայն մյուս Եկեղեցիներից վանդանվելու համար հետըզհետե ընդհանրացավ նրա սեփականացրած այս անվանման կիրառությունը:

Ժամանակի ընթացքում այս կաթոլիկ Եկեղեցում զգալի էր դառնում բարենորոգումներ անելու անհրաժեշտությունը. առ այդ գրեթե ոչինչ չէին կարողացել անել Պիզայի, Կոնստանցի, Բազելի և նույնիսկ Լատերանի Ե ժողովները: Մի կողմից Հռոմի պապը չէր ուզում վիջել իր հոգևոր իշխանության գերագահ դիրքը հանդեպ աշխարհիկ իշխանությունների և իրեն համարում էր **«Երկրային աստված»**, մյուս կողմից էլ պաշտոնների վաճառքը, ընչաքաղցությունը, եկեղեցական խորհուրդների և ծեսերի չարաշահումը, սնոտիապաշտությունն ու սրբերի հաճախ կեղծ մասունքների նկատմամբ հրահրված պաշտամունքը ապականել էին եկեղեցականների և եկեղեցական իշխանավորների մեծագույն մասին: Վանականության մեջ զգալի էին դարձել անբարոյականությունն ու տգրտությունը:

Եկեղեցականների քարոզածը հաճախ անհարիր էր ս. Գրքի վարդապետությանը: Նրանք վիուկներ ու կախարդներ փնտրելու պատրվակով իրենց հակառակորդներին ենթարկում էին հավատաքննության ահավոր դատաստանին: Հավատաքննությունը (inquisitio) սկիզբ էր առել ԺԲ դարից: Հավատաքննություն կատարելիս իրավասությունը նախապես պատկանում էր եպիսկոպոսներին, սակայն Ինոկենտիոս պապը 1248 թ. դոմինիկյան միաբանության կրոնավորներին էլ թույլ տվեց այս խնդրով զբաղվել: Միայն Իսպանիայում, օրինակ, տիրահռչակ հավատաքննիչ Թովմաս դե Տորկվեմադան (1420—1498) խարույկի վրա այրել տվեց ավելի քան 10 հազար հոգու: Այսպիսով քրիստոնեությունը գնալով դադարում էր սիրո կրոն լինելուց և վերածվում ահ ու սարսափ տարածող, ինչպես նաև խեղճերին շահագործող մի կրոնի:

Ցույց տալու համար կաթոլիկ Եկեղեցու ունեցած անլուրջ վերաբերմունքը բարեկարգության նկատմամբ արժե անդրադառնալ հետևյալ ցայտուն դեպքին, որը տեղի ունեցավ Լատերանի Ե ժողովի օրերին (1512—1517): Դեռևս 23-ամյա Ալբրեխտ Բրանդեր-

բուրգցին 1513 թ. Մագդեբուրգի արքեպիսկոպոս էր ընտրվել, իսկ մի տարի անց Մայնցի եկեղեցական ավագանու կողմից նա ընտրվեց տեղի արքեպիսկոպոս և ստացավ կայսրընտիր իշխանի հանգամանք: Տասը տարվա ընթացքում Մայնցում երրորդ անգամ էր, որ նոր արքեպիսկոպոս էր պաշտոնի անցնում: Հռոմի պապից հաստատվելու համար յուրաքանչյուրը պարտավոր էր աթոռի և պալլիումի որպես տուրք 14 հազար դուկատ (ոսկեդրամ) վճարել: Այդ գումարը գոյանում էր հատկապես դրոշմի արարողության առթիվ գանձված տուրքերից: Բրանդերբուրգցիները հակառակ էին, որ Ալբրեխտը հաստատվեր որպես արքեպիսկոպոս միաժամանակ երեք թեմերի՝ Բրանդերբուրգի, Հալբերշտադի և Մայնցի: Եկեղեցական օրենքով էլ մի եկեղեցական իրավունք չուներ մի քանի պաշտոններ վարելու: Սակայն Լևոն Ժ պապը նյութական և քաղաքական շահերը օրենքից բարձր գնահատելով՝ իր մարդկանց միջոցով առաջարկեց Ալբրեխտի պատգամավորներին, որ 10 հազար դուկատի հավելյալ վճարումով ինքը համաձայն կլինի հաստատելու Ալբրեխտի նոր պաշտոնը ևս: Պապական գործարքի պատասխանատուները ցույց տվեցին նաև, թե ինչ ճանապարհով հնարավոր էր հայթայթել հիշյալ գումարը: Բրանդերբուրգի և Մայնցի վիճակներում **«Ներման թղթերը»**[1] պետք է վաճառեին, որոնցից գոյացած հասույթի կեսը ս. Պետրոս տաճարի կառուցմանը, իսկ մյուս կեսն էլ Ալբրեխտին պիտի հատկացվեր՝ ի դիմաց ֆուգգերներից[2] կատարած իր դրամական փոխառության:

Վերոհիշյալ դեպքը, որը ժողովրդային մի մեծ պոռթկումի առիթ տվեց, մի օրինակ է միայն եկեղեցական պաշտոնների ընթացիկ վաճառման, այսինքն՝ սիմոնականության:

ԺԴ դարի վերջերին Եվրոպայում սկիզբ առավ մշակութային և գիտական մի շարժում, որը հայտնի է **հումանիստական շարժում** անունով: Մեջտեղ եկան հումանիստ մտածողներ, որոնք սկսեցին վերարժևորել դասական հնադարի մշակույթը, այսինքն՝ հին լեզուները, արվեստն ու գրականությունը՝ բոլորովին անկախ կրոնական և աստվածաբանական նկատառումներից: Այս ժամանակաշրջանում գործող հայտնի հումանիստներ էին՝ Լեոնարդո դա Վինչին, Գալենոսը, Լորենցո Վալլան, Նիկոլայոս Կուսանոսը, Նիկոլայոս Կոպեռնիկոսը, Երասմ Ռոթերդամցին, Յոհաննես Ռոյխլինը և ուրիշներ: Եկեղեցական բարեկարգության հարցում իրենց կարևոր նպաստը բերեցին հումանիստներից **Լորենցո Վալլան** (1405—1457) և **Երասմ Ռոթերդամցին** (1469—1536):

Լորենցո Վալլան, լինելով հռչակավոր լատինագետ, առաջադեմ փիլիսոփա և ս. Գրոց մասնագետ, 1440 թ. իր մի գրությամբ ("De Donatione Constantini Imperatoris") ապացուցում է Կոստանդիանոս կայսեր տված հրովարտակի կեղծիքը պապի իշխանության և նրա ունեցած կալվածների վերաբերյալ: Այդ հրովարտակը հայտնի էր «Կոստանդինյան պարգև» անվամբ: Պապերն իրենք էին հնարել նման շինծու փաստաթղթեր՝ իրենց իշխանության անձեռնմխելիությունը հաստատելու համար[3]: Վալլան ենթարկվում է եկեղեցական հալածանքի:

Հումանիստների մեծագույն դեմքն է համարվել **Երասմ Ռոթերդամցին** (Դեսիդերիոս): Նա մեծ հեղինակություն է ձեռք բերել ոչ միայն իր հայրենիքում, այլև՝ Գերմանիայում, Ֆրանսիայում և Անգլիայում: Նա թողել է մի գրվածք «Հիմարության գո-

[1] Ներման թուղթը մեղավորին մեղքերից ազատվելու համար էր վաճառվում: Սկզբում այն մեղավորին մղում էր իր վրա դրված ապաշխարության շրջանում նյութական հատուցում կատարելու, հետագայում, սակայն, կաթոլիկ Եկեղեցու համար այն դարձավ շահագործման կարևոր աղբյուր, երբ սկսեց փոխարինել բուն ապաշխարության խորհրդին:

[2] Ֆուգգերները սերում էին Աուգսբուրգ քաղաքի մեծահարուստ վաճառական և դրամատեր Ֆուգգերի ընտանիքից, որոնք երկրում և արտասահմանում կատարում էին դրամական փոխատվություններ:

[3] Ապացուցելու համար կաթոլիկ եկեղեցու մենատիրական ձգտումները՝ հարկ ենք համարում մի հատված մեջբերել հիշյալ հրովարտակից, որը իբր թե Կոստանդիանոս կայսրն (306—337) է շնորհել Սեղբեստրոս պապին (314—335) իր կառուցած մայրաքաղաքը՝ Կ. Պոլիս տեղափոխվելուց հետո (330 թ.):

«Համաձայն մեր ունեցած կայսերական երկրային իշխանության՝ որոշեցինք, որ Ձեր հռոմեական սրբազնասուրբ Եկեղեցին մեծավ հարգանք ի պատվի լինի, ինչպես նաև Պետրոս Առաքյալի սրբազնագույն Գահը առավել քան Մեր կայսերական զորությունն ու Մեր երկրային գահը...:

Մենք պատշաճ համարեցինք փոխադրել Մեր իշխանությունն ու Մեր արքայական նստավայրը դեպի Արևելք՝ Մեր անունով մի քաղաք հիմնելով հեռավոր Բյուզանդ զավառում և այնտեղ հաստատելով Մեր գահը, որովհետև այն քաղաքում, ուր քահանայապետն ու քրիստոնեական կրոնի գլուխը երկնային Կայսրից է հաստատված, պարզ է, որ այնտեղ երկրային կայսրն այլևս կարողություն չի ունենա իշխանություն բանեցնելու»: (Illustrierte kirchengeschichte in Farbe, Herrsching, 1983, էջ 224—225):

վեստը» վերնագրով, որի մեջ ձաղկում է հիմարության երկրպագուներին, որոնց թվում հատկապես կաթոլիկ հոգևորականներին՝ Հռոմի պապի գլխավորությամբ: 1502 թ. հրատարակել է **«Ձեռնարկ»** (Enchiridion) անունով մի գրություն, որով, ինչպես ինքն է ասում, ցանկացել է «հակադրել այն մարդկանց սխալին, ովքեր բարեպաշտությունը ծեսերի կամ արտաքին երևույթների կամ էլ վանական կյանքի մեջ էին փնտրում և այդպիսով անտեսում նրա բուն էությունը»[4]:

Երազմի կարևոր գործերից է Նոր Կտակարանի հրատարակությունը հունարեն լեզվով և լատիներեն թարգմանությամբ: Նա համարձակորեն սրբագրել է Վուլգատան: Մարթին Լութերը ս. Գիրքը թարգմանելիս ձեռքի տակ է ունեցել Երազմի թարգմանությունը:

1485 թ. Մայնցի արքեպիսկոպոս Բերթոլդ ֆոն Հեննեբերգը հրապարակում է մի հայտարարություն, որով արգելում է սուրբ Գրքի ապատ տպագրությունը, ինչպես նաև հունարենից ու լատիներենից նրա թարգմանությունը այն պատճառաբանությամբ, որ գերմաներենը շատ աղքատ է արտահայտելու համար սրբական գրքերի նվիրական իմաստը: Նա նույնիսկ թույլ չի տալիս, որ գիտության և արվեստի գրքերը ուրիշ լեզուներով հրատարակվեն: Այս առթիվ Երազմ Ռոթերդամցին իր «Խրատ վասն ուսմանն քրիստոնեական փիլիսոփայության» գրությամբ հակաճառում է հիշյալ արքեպիսկոպոսին: Ահա մի հատված այդ գրությունից. «Երբ մեկը մեզ Քրիստոսի ոտնահետքն է ցույց տալիս, մենք՝ քրիստոնյաներս, ծնկի գալով պաշտպանում ենք այն: Սակայն ինչո՞ւ չենք նախընտրում մեծարել նրա կենդանի և շնչող կերպարանքը ս. Գրքի մեջ: Երբ մեկը Քրիստոսի վգեստն է ցուցադրում, ուխտի գնալով ինչքա՞ն հեռու ճանապարհ ենք կտրում՝ պարզապես համբուրելու համար այն: Բայց դու եթե նրա բոլոր առտնին գործիքներն էլ ինձ ցույց տաս, ոչինչ չի կարող իմ աչքերի առաջ այնքա՞ն տպավորիչ և այնքա՞ն հարազատ ուրվագծել Քրիստոսին, որքան Ավետարանի մեջ գտնվող նրա պատկերը: ...Ս. Գիրքն է հայտնում քեզ Քրիստոսի կենդանի պատկերը, այսինքն՝ նրա անձը ճիշտ այնպես, ինչպես նա խոսում է, բժշկում, մահանում և հարություն առնում: Դու այլևս չես կարող նրան քո մարմնավոր աչքերով նայել»[5]:

Հիշյալ մտավորական գործիչների թվին պետք է ավելացնել նաև Մարտին Լութերին կանխող եկեղեցական երեք նշանավոր բարեկարգիչների՝ **Ջոն Վիկլիֆին** (Վայկլիֆ), **Յան Հուսին** և **Սավոնարոլային**, որոնք գրքեր գրելուց բացի, ձեռնամուխ եղան քարոզության և ժողովրդի լուսավորության կարևոր գործին: Հակառակ նրանց աստվածաբանական երբեմն ծայրահեղ կամ մեկ խոտոր թվացող մտքերին, պետք է ընդունել, որ նրանց գլխավոր և անկեղծ մտահոգությունն է եղել Եկեղեցու բարեկարգության հարցը: Նրանք գործել են անտեսելով իրենց կյանքին սպառնացող բոլոր վտանգները և հող են նախապատրաստել եկեղեցական հետագա բարեկարգության համար. Այս տեսակետից հատկանշական է նրանցից մեկի՝ Ջոն Վիկլիֆի հետևյալ խոսքը. «Նրանք, ովքեր մարդկանց կողմից սահմանված բանադրանքի պատճառով հրաժարվում են քարոզչությունից, այդպիսիներն արդեն իսկ բանադրված են և վերջին Դատաստանի օրը Աստուծո դավաճանները պիտի կոչվեն»[6]:

Ջոն Վիկլիֆը (մոտ. 1330—1384) անգլիացի նշանավոր փիլիսոփա, աստվածաբան և բարեկարգիչ էր: Լինելով եկեղեցական և քաջածանոթ ս. Գրքի ոգուն՝ նա ջատագովում էր կամավոր աղքատությունը և սակավապետությունը: Օքսֆորդում նա դասավանդել է աստվածաբանություն:

Վիկլիֆը խստորեն քննադատում էր պապական ընչաքաղցությունն ու եկեղեցականների աշխարհիկ իշխանություն ձեռք բերելու ձգտումը: Նա անարժեք և ավելորդ էր համարում եկեղեցական այն բոլոր ավանդույթները, որոնք անհամատեղելի էին ս. Գրքի հետ: Ըստ նրա, Եկեղեցու իսկական գլուխը Քրիստոսն էր, և դրա համար էլ ոչնչով արդարանալի չէր Հռոմի պապի հավակնությունը՝ լինելու գլուխը քրիստոնեական Եկեղեցու, մանավանդ, որ Եկեղեցին էլ իր հերթին 1054 թ. տարակարծությունների հետևանքով երկու մասի էր բաժանված՝ արևելյան-բյուզանդական և հռոմեական-կաթոլիկ, իսկ վերջինս էլ իր մեջ բաժանումներ ուներ. Հռոմում և Ավինյոնում տարբեր պապեր էին իշխում՝ Ուրբանոս Զ-ը և Կղեմես Է-ն:

Վիկլիֆը դեմ էր քահանաների ամուրիությանը, մեղքեր կապելու և արձակելու նրանց իրավասության, ինչպես նաև հավատացյալների և Աստծու միջև միջնորդության: Նա հակառակ էր կաթոլիկ Եկեղեցու ընդունած «գոյացափոխության» վարդապետությանը:

Գրիգոր ԺԱ պապը (1370—1378), ծանո-

[4] D. Bernhard Rogge, Das Evangelium in der Verfolgung, köln, 1925, էջ 19:

[5] Illustrierte... էջ 432:

[6] Անդ, էջ 337:

թանալով նրա «Քաղաքացիական իշխանության մասին» (De civil dominio) գրքին, արգելեց այն և բանադրեց հեղինակին:

1382 թ. Լոնդոնում գումարված եկեղեցական մի ժողովում Վիկլիֆի ուսմունքը դատապարտվեց, սակայն նա ազդեցիկ կուսակիցների շնորհիվ ազատվեց մահապատժից: Նա թողել է բազմաթիվ գրվածքներ և ավելի քան 300 հոգեշունչ քարոզներ: Նրա կարևոր գործերից է նաև 1383 թ. հրատարակված Նոր Կտակարանի անգլերեն թարգմանությունը:

1415 թ. մայիսի 4-ին, Կոնստանցի ժողովում, Վիկլիֆը, հետ մահու, պաշտոնապես հերետիկոս հռչակվեց: Եկեղեցին նրա ոսկորները հանել տվեց գերեզմանից և թափեց Լուտերվորթի մոտից անցնող գետակի մեջ: Նրա հետևորդները ծանր հալածանքի ենթարկվեցին, բայց նրա ուսմունքը շարունակեց ապրել բոհեմիական Հուսյանների մոտ:

Յան (Յոհան) Հուս (1369—1415): Բոհեմիացի եկեղեցական, հռետոր և բարեկարգիչ: Ծնվել է Բոհեմիայի հարավում գտնվող Հուսինեց գյուղաքաղաքում, որի համար էլ ստացել է Հուս անունը: Պրագայի համալսարանն ավարտելուց հետո նա ձեռնադրվել է քահանա և նշանակվել Բեթլեհեմ անունով մի մատռան քարոզիչ: Նա միաժամանակ եղել է Բոհեմիայի Սոֆիա թագուհու խոստովանահայրը:

Աննա Բոհեմիացու հետ (1382 թ.) Անգլիայի Ռիչարդ Բ թագավորի ամուսնության շնորհիվ, Անգլիայի և Բոհեմիայի միջև բարեկամական սերտ հարաբերություններ են հաստատվում, որով բազմաթիվ չեխ երիտասարդներ առիթ են ունենում ուսանելու Անգլիայում: Նրանք հայրենիք վերադառնալով՝ իրենց հետ բերում են Ջոն Վիկլիֆի գրությունները: Նրանց մեջ էր Հերոնիմոս Ֆաուլֆիշը, որը մտերմացել էր Հուսի հետ:

Հուսը թեև ազդվել էր Վիկլիֆի գրություններից, սակայն ամեն ինչ նրանից չէր ընդօրինակում. որոշ տեղեր, ինչպես «գոյացափոխության» հարցում, նա համաձայն չէր Վիկլիֆի հետ:

Բարեկարգության պահանջը հետզհետե սկսել էր զգալի դառնալ նաև Պրագայում: Հուսը լծվում էր աշխատանքի, քննադատում էր Հռոմի պապի բռնակալությունը, մերժում էր Ավետարանի ոգուն խորթ համարվող եկեղեցական ավանդույթներն ու օրենքները: Ըստ նրա, պապական հեղինակությունը, ապավինելով իր քաղաքական ուժին և իշխանությանը, չի կարող ներկայացնել Քրիստոսի հիմնած ճշմարիտ Եկեղեցին: Աստծուն հնազանդվող հավատացյալներն են կազմում Եկեղեցին և ոչ թե պապական իշխանությանը ենթարկվող մարդիկ:

Հուսի պայքարը անողոք էր նաև այսպես կոչված «Ներման թղթերի» վաճառքի[7] և սըրբերի մասունքներին մատուցվող ծայրահեղ պաշտամունքի դեմ: 1413 թ. նա հրատարակեց իր «Եկեղեցվո մասին» (De Ecclesia) գիրքը, որի մեջ ամփոփել էր իր բարենորոգչական գաղափարները: Նա կատարեց նաև թարգմանություններ և Վիկլիֆի գործերն ու ամբողջ ս. Գիրքը չեխերենի վերածեց:

Կաթոլիկ Եկեղեցին Բոհեմիայում նախ արգելեց Վիկլիֆի գրությունները և սպառնաց խարույկի վրա բարձրացնել բոլոր նրանց, ովքեր կհամարձակվեն կարդալ Վիկլիֆի գրքերը կամ տարածել նրա գաղափարները: Ապա սկսեց իր պայքարը Հուսի դեմ: Ալեքսանդր Ե պապը քարոզելու իրավունքից զրկեց Հուսին, բայց նա չհնազանդվեց պապին:

Հուսը ուներ բազմաթիվ հետևորդներ, սակայն Եկեղեցու և հատկապես Պրագայում ապրող գերմանացիների պայքարը շատ ուժեղ էր նրա դեմ, որովհետև նա ուզում էր ազգային նկարագիր տալ իր Եկեղեցուն և որևէ արարողություն կամ դաստիարակչական գործունեություն ժողովրդի մեջ փորձում էր ընդհանուրին հասկանալի ու մատչելի լեզվով ծավալել:

Բոհեմիայի Վենցել թագավորը (1361—1414) թեև ուզում էր պաշտպանել Հուսին ընդդեմ պապի բանադրանքների, բայց նրան չէր կարելի վստահել, որովհետև նա հոռի կրքերով տարված մի անձնավորություն էր, այն աստիճան, որ իր խոստովանահոր՝ Յոհան Նեպոմուկցուն անձամբ խոշտանգել էր և նրա ոտքերն ու ձեռքերը կապելով՝ Մոլդաու (Վլտավա) գետն էր գցել նրան:

---

[7] Ահա մի հատված Հուսի ընդդեմ «Ներման թղթերի» վաճառքի խոսքերից. «Աշխարհի խաբեբաներն ու կեղծ քահանաները անամոթաբար քարոզում են, թե ով որ դրամ տա՝ թողություն կստանա իր մեղքերից: Ճիշտ չի կարող լինել, որ մեկը միայն դրամ տալով և իր գործած հանցանքների համար առանց արդյունաբեր զղջման իր մահից հետո անմիջապես երկինք գնա, իսկ մեկ ուրիշը, որ ոչինչ չի վճարել, իր մեղքերի համար մեծագույն տանջանք կրի: Նման մի ուսմունք արդյոք հեշտությամբ մեջտեղից չի՞ վերացնի Աստծո արդարությունը, երբ յուրաքանչյուր ոք, որ դրամ ունի, իր համար ներման մի թուղթ գնելով՝ իր մահից հետո կարողանա, առանց նեղության, ուղղակի երկինք գնալ» (Michael Freud, Deutsche Geschichte, Bertelsmann Lexikon-Verlag, 1973, էջ 257):

Գերմանիայի կայսր Սիգիզմունդը ուզում էր սիրաշահել Հուսին, որպեսզի այդ միջոցով շահի չեխերի համակրությունը և իր եղբոր՝ Վենցել թագավորի մահից հետո ինքն իշխի նաև Բոհեմիայի վրա: Այս պատճառով էլ նա ապահովագիր տվեց Հուսին, որ գա Գերմանիա և մասնակցի Կոնստանցի նշանավոր ժողովին (1414—1418):

Սույն ժողովի նպատակն էր վերացնել 1378 թ. հռոմեական կաթոլիկ Եկեղեցու վարչական հերձվածը: Սիգիզմունդի պնդումով Պիզայում նստող Հովհաննես ԻԳ պապը կոչ արեց եկեղեցական ավագանուն և իշխաններին հավաքվել Կոնստանցիայում: Ժողովին ներկա էին 33 կարդինալներ, 300 եպիսկոպոսներ, 150 իշխաններ և կոմսեր, մոտավորապես 2000 համալսարանականներ, վարդապետներ, վանականներ, ավնվականներ և արտասահմանյան պատգամավորներ: Օրակարգի գլխավոր հարցերն էին.

ա. Եկեղեցու միության հարցը (causa unionis).

բ. Բարեկարգության հարցը (causa reformationis)

գ. Հավատո և կարգի հարցեր (causa fidei)

Վերջին հարցերի մեջ մտնում էին Ջոն Վիկլիֆի գործերի քննարկումը, ինչպես նաև Յան Հուսի ու նրա համախոհների հարցաքննությունը:

Հուսը ներկայացավ հիշյալ ժողովին, սակայն նրա թշնամիները նրա դեմ բազմաթիվ 'սուտ վկայություններ բերելով՝ պահանջեցին, որ նա դատապարտվի: Հակառակ Սիգիզմունդ կայսեր ապահովագրին՝ Հուսին ութ ամիս բանտում պահեցին: Բոհեմիայի ժողովուրդը ընդվզեց այս անիրավության դեմ և պահանջեց իր վարդապետի վերադարձը: Իսկ Հուսը պնդում էր, որ ս. Գրքի միջոցով ապացուցեն իր մոլորությունները: Ժողովի ընթացքում Հուսից պահանջեցին հրաժարվել իր գաղափարներից և առիթ չտվեցին նրան պաշտպանվելու: 1415 թ. հուլիսի 6-ին, ճիշտ իր ծննդյան տարեդարձի օրը, նրան բարձրացրին խարույկի վրա[8]:

Հուսի աշակերտն ու մտերիմը՝ Հերոնիմոս Պրագացին, որ նույնիսկ Կոնստանց էր եկել, ճնշումների ներքո հրաժարվեց իր համոզումներից, սակայն հետո խղճահարվելով՝ վերադարձավ իր նախկին դավանանքին և դրա համար էլ 1416 թ. Հուսի նման դատապարտվեց և հրկիզվեց:

Շնորհիվ իր քարոզների և չեխերեն գրված իր գրքերի՝ Հուսը մեծ ժողովրդականություն էր շահել Բոհեմիայում: Երբ նրա անագորույն մահվան լուրը տարածվեց, Բոհեմիացիք վայրացած ապստամբություն բարձրացրին և սկսեցին հալածել կաթոլիկ եկեղեցականներին ու ավնվականներին: Այս ապստամբությունը գնալով սաստկացավ և ստացավ **«Հուսյան շարժում»** անունը: 1419 թ. խռովահույզ ամբոխը սկսեց քարուքանդ անել եկեղեցիներն ու վանքերը, ինչպես նաև հալածել գերմանացիներին:

Ապստամբներին հաջողվեց գրավել քաղաքային խորհրդարանի շենքը: Նրանք խորհրդի անդամներին լուսամուտներից ցած գցեցին: Նրանք հրաժարվեցին ճանաչել Սիգիզմունդ կայսրին որպես Բոհեմիայի թագավոր: Այս արյունալի շարժումը շարունակվեց մինչև 1436 թ.:

Հռոմի պապը Հուսյանների դեմ խաչակրաց արշավանք հայտարարեց: Այդ արշավանքը գլխավորում էր Սիգիզմունդ կայսրը, որին միացել էին Եվրոպայի վանական շրջաններից եկած ասպետներ: Կռիվների ընթացքում Հուսյանները մեծ հաջողությամբ կարողացան դիմադրել թշնամուն:

1420—1431 թթ. գերմանացիները հինգ անգամ խաչակրաց արշավանք կազմակերպեցին Հուսյանների դեմ: Վերջիններս **Յան Ժիշկայի** գլխավորությամբ խիզախորեն մարտնչում էին ներխուժողների դեմ:

Հուսյանների մեջ երկու խմբավորում առաջացավ. առաջին խմբավորմանը մաս էին կազմում **չափավորները**, որոնք բաղկացած էին համալսարանականներից, քաղաքաբնակներից և ավնվականներից: Սրանք կոչվում էին նաև **բաժակյաններ** (kalixtiner, քանի որ ս. Հաղորդությունը վույգ կերպարանքով, այսինքն՝ մարմնով և արյամբ միասին մատակարարում էին հավատացյալներին, ի տարբերություն կաթոլիկների, որոնք սովորություն էին դարձրել միայն մարմնով ս. Հաղորդություն տալ): Երկրորդ խմբավորման մաս կազմողները կոչվում էին **Թաբորականներ** (իրենց հիմնած Թաբոր քաղաքի անունով): Սրանք բոլորովին անվիջող դիրք էին բռնել հռոմեական կաթոլիկ Եկեղեցու նկատմամբ: Սրանց թվում էին գյուղացիներն ու արհեստավորները:

Չափավորները ուզում էին համաձայնու-

[8] Այս մասին, օգտվելով օտար աղբյուրներից, Խաչատուր Աբովյանը իր «Համառոտ պատմութիւն կենաց եւ մարտիրոսական մահուան մագիստրոսի Յովհաննու Հուսի» գրության մեջ մեկ տալիս է այնպիսի մի նկարագրական, որով կարողանում ենք գաղափար կազմել կաթոլիկ Եկեղեցու գործադրած քստմնելի հալածանքների մասին ընդդեմ բոլոր ապատ մտածողների և առաջադիմական գաղափարներով տոգորված մարդկանց: (Տես Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հինգերորդ հատոր, Երևան, 1950, էջ 408—412):

թյան գալ գերմանացիների հետ. նրանք ընդունում էին Սիգիսմունդ կայսեր հեղինակությունը, իսկ կայսրն էլ համաձայնվել էր ճանաչել չեխական Եկեղեցու անկախությունը: Այս պատճառով Թաբորականների և չափավորների միջև գժտություն առաջացավ, նրանք սկսեցին կռվել իրար դեմ, և այսպիսով ձախողության մատնվեց Հուսյան շարժումը:

Որպես եզրակացություն՝ պետք է ասել, որ Յան Հուսը իր սկսած շարժումով գործնականապես կանխեց Մարտին Լութերին: Խարույկի վրա հրկիզվելիս նա արդեն հետևյալ գուշակությունն էր արել ապագա բարեկարգիչի մասին. «Դուք այժմ խորովում եք սագ («Հուս» նշանակում է սագ), սակայն հարյուր տարի հետո դուք պիտի լսեք երգը մի կարապի, դուք պիտի հանդուրժեք նրան, և նա էլ, եթե Աստված կամենա, հաստատ պիտի մնա»[9]:

Հերոնիմոս (Ժերոնիմո) Սավոնարոլան (1452—1498) անդամ է Ֆլորենցիայի դոմինիկյան միաբանության: Նա քարոզում էր ապաշխարություն և եկեղեցական կարգաց ու կանոնաց բարեկարգություն: Ի տարբերություն Վիկլիֆի կամ Հուսի, Սավոնարոլան, դատապարտելով հանդերձ կրոնական բարքերի ապականությունը, չցանկացավ երբեք դուրս գալ հռոմեական կաթոլիկ Եկեղեցու հաղորդությունից կամ էլ բաժանվել պապականությունից:

Սավոնարոլան ինքն իրեն համարում էր Աստծուց ուղարկված մի մարգարե և պահանջում էր վերացնել բարոյական ապականությունը Եկեղեցու և ժողովրդի միջից: Նրա ազդեցությունն ու արժանիքները այնքան մեծ էին, որ 1491 թ. ս. Մարկոս մենաստանի վանականները իրենց վանքի վանահայր նշանակեցին նրան: Այս ժամանակաշրջանում նա բախումներ ունեցավ Ֆլորենցիայի կառավարիչ Լորենցոյի հետ, որը սերում էր մեդիչիների հայտնի գերդաստանից: Սրա մահը Սավոնարոլան համարեց որպես աստվածային մի պատիժ, որից հետո ինքը դարձավ Ֆլորենցիայի ամենապերդեցիկ դեմքը:

Լորենցոյի որդու՝ Պետրոս Մեդիչիի փախուստից հետո, Սավոնարոլան մի ժողով գումարեց Ֆլորենցիայի Մայր տաճարում: Ժողովում նա Հիսուս Քրիստոսին հռչակեց Ֆլորենցիայի թագավոր՝ այսպիսով հիմը դնելով աստվածպետական մի հասարակարգի: Այս առիթով, սակայն, նա ստիպված եղավ մխրճվել քաղաքական խնդիրների մեջ, որոնց դառն հետևանքները շուտով կրեց:

Ալեքսանդր Զ վատահամբավ պապը (1492—1503) ուզեց սիրաշահել Սավոնարոլային և նրան խոստացավ կարդինալական պատիվ, պայմանով, որ դադարեցնի իր քննադատությունները: Նա խիստ վիրավորվելով մերժեց պապի առաջարկը:

Ակնվականներից ոմանք և Մեդիչիի կուսակիցները գաղտնի պատրաստություն էին տեսնում խորտակելու համար Սավոնարոլայի ձեռք բերած ազդեցությունը: Ալեքսանդրը Զ պապն էլ, նրան չեզոքացնելու նպատակով, Հռոմ հրավիրեց: Սավոնարոլան չհնազանդվեց պապին: Վերջինս արգելեց նրան քարոզել: Սակայն նա այս հրահանգին էլ չենթարկվեց. ավելին, պահանջեց, որ եկեղեցական մի ժողով գումարվի և պաշտոնանկ արվի պապը իր գործած խայտառակությունների համար:

1497 թ. պապն սպառնաց Ֆլորենցիայի սենատին, որ, եթե Սավոնարոլային չլռեցնի, ապա ինքը ամբողջ քաղաքը կսրկի եկեղեցական պաշտամունքներից և հոգևոր մատակարարությունից, այսինքն՝ եկեղեցական արգելք (interdikt) կդնի քաղաքի վրա: Սենատում Սավոնարոլայի հակառակորդները բազմացել էին, ժողովուրդն էլ խռովության մեջ էր: 1498 թ. ապրիլի 8-ի գիշերը հակառակորդները խուժեցին ս. Մարկոսի մենաստանը և ձերբակալելով Սավոնարոլային՝ բանտ գցեցին և սարսափելի տանջանքների ենթարկեցին նրան: Նրա դատավարությունը տևեց վեց շաբաթ: Պապը դատավորին ասել էր. «Եթե նա նույնիսկ Հովհաննես Մկրտիչը լինի, միևնույն է, պետք է մեռնի»[10]: Նույն տարվա մայիսի 23-ին Սավոնարոլային հրկիզեցին Ֆլորենցիայի գլխավոր հրապարակի վրա, ժողովրդի առաջ, իր երկու միաբանակիցների՝ Դոմինիկոսի և Սեղբեստրոսի հետ: Դրանից քիչ առաջ, երբ նրան մերկացնում էին իր քահանայական զգեստներից, մի եպիսկոպոս, մոտենալով ասաց նրան. «Ես քեզ բաժանում եմ Եկեղեցուց»: Իսկ նա պատասխանեց. «Բայց սուսկ կինվորայ Եկեղեցուց և ոչ հաղթանակից»[11]:

Մահվանից մեկ օր առաջ Սավոնարոլան գրել-վերջացրել էր իր սաղմոսաց մեկնությունը, որը հետագայում Լութերի կողմից գերմաներեն թարգմանվեց:

Այսօր հռոմեական կաթոլիկ Եկեղեցին, ընդունելով հանդերձ Սավոնարոլայի դրական

---

[9] **Heiko A. Oberman**, Luther, Berlin, 1983, էջ 63—64.

[10] **D. Bernhard Rogge**, Das Evangelium in der Verfolgung, Köln, 1925, էջ 65:

[11] **Մելքիսեդեկ եպս. Մուրատեանց**, Պատմութիւն Քրիստոնէական Եկեղեցւոյ, 1898, էջ 263:

դիրքորոշումը Եկեղեցու և եկեղեցիների նկատմամբ, չի ուզում դասել նրան իր նահատակների շարքը՝ պապի հանդեպ նրա անհնազանդությունը համարելով կարևոր թերություն[12]:

Ահա մի հատված Սավոնարոլայի քարոզությունից. «Ի՜մ եղբայրներ, սա՛ է Բաբելոն քաղաքը, հիմարների և չարգործների քաղաքը, որ Աստված պիտի կործանի: Գնացե՛ք Հռոմ, այնտեղ բովանդակ քրիստոնեության համար մեծամեծ եպիսկոպոսներ պարապում են բանաստեղծությամբ և պերճախոսությամբ: Նրանց ձեռքում դուք կըգտնեք Օրատիոսի, Վերգիլիոսի և Կիկերոնի գլխավոր երկերը: Դրանցով են նրանք ուսանում հոգևոր տեսչությունը: Նրանք իրենց Եկեղեցին կառավարում են աստղաբաշխների միջնորդությամբ, որոնք ծանուցում են նրանց այն նշանավոր ժամը, թե ե՞րբ պետք է գնան ձիեր փորձելու...: Նրանց Եկեղեցին գեղեցիկ է իր արտաքին տեսքով՝ իր զարդերով և դրվագներով, շքեղ հանդեսներով, ոսկյա և արծաթյա աշտանակներով, ճոխ սկիհներով, ոսկեդրվագ թագերով, թանկագին քարերով. բայց պետք է ասել ձեզ, որ նախնական Եկեղեցու մեջ սկիհները փայտից էին, իսկ եպիսկոպոսները՝ ոսկուց: Այսօր բոլորովին հակառակն ենք տեսնում: Հռոմի եպիսկոպոսները մեր մեջ բերեցին դժոխքի հանդեսները: Նրանք այլևս չեն հավատում Աստծուն և ծիծաղում են մեր սուրբ կրոնի խորհուրդների վրա...: Ո՞ւր ես դու, ո՜վ Տեր, ինչո՞ւ ես քնում, զարթնիր և եկ ազատելու քո Եկեղեցին դեվերի ձեռքից, բռնավորների ձեռքից, վատ քահանաներից: Միթե մոռացե՞լ ես քո Եկեղեցին, միթե այլևս չե՞ս սիրում այն, շտապիր պատժելու նրանց, որպեսզի մենք էլ շտապենք և դառնանք դեպի քեզ»[13]:

[12] Illustrierte... էջ 963.

[13] **Մելքիսեդեկ եպս.**, նույնը, էջ 263—264 (մեջբերումի լեզուն վերածել ենք արևելահայերենի):